ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Երաժշտություն

(առարկա)

Թեմա՝ Երաժշտության ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցներում որպես դաստիարակչական մեթոդ

Կազմեց՝ **Նելլի Նազարյան**

«Կապանի N13 հիմնական դպրոց»

Ղեկավար՝ **Միլենա Մինասյան**

Կապանի N2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն 2
- Երաժշտության ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցներում որպես դաստիարակչական մեթոդ 3
- Կոմիտասյան երաժշտությունը դաստիարակության հզոր ազդակ 6
- Դասի պլան 11
- Եզրակացություն 14
- Օգտագործված գրականության ցանկ 15

Ներածություն

Երաժշտությունը արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության ոևույթները։ Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար։ Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում էնրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել։

Երաժշտության կարևորագույն առաննձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն։ Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին մեծ Կոմիտասը . «Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ–որ ժամանակներու գործ է։ Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»։

Երաժշտական դաստիարակությունը նպատակաուղղված կարգ,ավորված և ղեկավարվող գործընթաց է, որի նպատակը համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդու դաստիարակությունն է, երաժշտության գիտակից ու ակտիվ ունկնդրի ձևավորումը։

Երաժշտության ուսուցման կարևորությունը հանրակրթական դպրոցներում որպես դաստիարակչական մեթոդ

«Ուսուցի՛չ, պարոններ և քույրեր.
Զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք
դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է
ձերը։ Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա
ազգն է։ Սխալ ուղղությամբ ազգ մը կխորտակեք վերջը»։

ԿՈՄԻՏԱՍ

Երաժշտությունը, ինչպես մայրենի լեզուն, ազգի մտացողությունը ինքնորույնությունն ու գոյությունը պահպանող միջոց է։

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է։ Այն կրթության և դաստիարակության բնագավառի կարևոր բաղադրամասերից մեկն է, առանց որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը։

Երաժշտական դաստիարակությունը նպաստում է ոչ միայն անհատի ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանն ու դրսևորմանը, այլև անցյալի գեղարվեստական փորձի, ազգային ու համամարդկային մշակութային արժեքների յուրացմանն ու հաջորդ սերնդին փոխանցմանը։ Երաժշտությունը սովորողների մեջ արմատավորում է մարդկային լավագույն հատկանիշներ, մարդասիրական զգացումներ, բարոյահոգեբանական նկարագիր, գեղագիտական աշխարհայացք, ազգային արժանապատվության խորը գիտակցում և հայրենասիրություն։

Երաժշտության միջոցով հնարավոր է դառնում հումանիզացնել կրթության և դաստիարակության գործընթացը, որը մեր ժամանակի կարևոր պահանջներից մեկն է։

Երաժշտությունը պարունակում է հսկայական կրթադաստիարակչական ներուժ՝ միջառարկայական կապեր ստեղծելով արվեստների և ֆիզիկական դաստիարակության, հումանիտար և բնագիտական առարկաների միջև։

Երաժշտական գործունեության տեսակները՝ երգեցողությունը, երաժշտության ունկնդրումը, երաժշտառիթմական շարժումը, նվագը և իմպրովիզացիան, լայն հնարավորություններ ունեն ձևավորելու և զարգացնելու սովորողների ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունները և հմտությունները: Երաժշտական դաստիարակությունը սերտ կապի մեջ է գիտատեխնիկական և սոցիալական առաջընթացի, կրթության և ուսուցման աճող պահանջների հետ: Բնական է, որ առանց մանկավարժական տեխնոլոգիաների փոփոխության, առարկայի գործընթացի բովանդակային վերակառուցման, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման հնարավոր չէ ինտեգրվել արդի կրթական համակարգին: Առավելապես հնարավոր չէ կազմակերպել սովորողների երաժշտական դաստիարակության գործընթացը:

Աշակերտների երաժշտական զարգացումը, դաստիարակությունը խիստ կապի մեջ է նանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հետ: Հաշվի առնելով այդ տարիքի երեխաների երաժշտության ընկալման ակտիվությունը և հետաքրքրությունների լայն շրջանակը, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տարրական դասարանների երաժշտական դաստիարակության վրա, այլապես դժվար կլինի միջին դասարանցիների երաժշտական դաստիարակության գործընթացը:

Երաժշտական դաստիարակության արդյունավետությունը և օգտակարությունը պայմանավորված է երաժշտության ուսուցչի մասնագիտական պատրաստվածությամբ ու մանկավարժական վարպետությամբ:

Երաժշտության ուսումնական դաստիարակության ընդհանուր նպատակները

- Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:
- Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:
- Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք

հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները:

- Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը:
- Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր:
- Դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր:
- Ձևավորել և ուղղորդել սովորողներին դեպի արդյունավետ երաժշտաստեղծագործական գործունեություն՝ ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա և այլն:
- Երաժշտական գործունեություն իրականացնել գործնականորեն կիրառելով ձեռք բերված երաժշտատեսական գիտելիքները և հմտությունները:
- Դաստիարակել աշխարհի նկատմամբ գեղագիտական վերաբերմունք, երաժշտական տեղեկատվության նկատմամբ՝ քննադատական վերաբերմունք:
- Ձևավորել և զարգացնել տրամաբանական, ստեղծագործական, կերպարային և ասոցիատիվ մտածողությունը, վերլուծական հմտությունները:
- Ձևավորել և զարգացնել ազգային երաժշտության գիտակ, ազգային ավանդույթները կրող, պահպանող ու սերունդներին փոխանցող սովորող:
- Ընդլայնել սովորողների երաժշտական և ընդհանուր մտահորիզոնը՝ շարունակել դաստիարակել երաժշտական ճաշակ, զարգացնել կայուն հետաքրքրություն այլ ժողովուրդների, դասական և ժամանակակից երաժշտության ժառանգության հանդեպ, արժևորել մշակութային բազմազանությունը:
- Շարունակել զարգացնել կայուն հետաքրքրություն դեպի ճանաչողական գործունեությունը, զարգացնել երեխաների երաժշտական ընդունակությունները, և կատարողական հմտությունները՝ հենվելով նրանց հետաքրքրությունների և հակումների վրա:
- Շարունակել զարգացնել քննական մտածողությունը, սեփական հիմնավորված դիրքորոշումը արտահատելու, մյուսների կարծիքը լսելու, հարգելու, պատճառահետևանքային կապերը վերլուծելու և որոշումներ կայացնելու հմտությունը:

- Դաստիարակել հատուկ վերաբերմունք և հետաքրքրություն մշակութային օջախների գործունեության նկատմամբ, դրսևորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտություն ունկնդրելու մշակույթ:
- Ապահովել շարունակական կրթության և երաժշտության հետ հաղորդակցվելու հնարավորությունները բոլոր սովորողների համար:

Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտական փորձառությունը կարող է նրանց համար արդյունավետ լինել լեզվական, ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սոցիալականացման համար:

Կոմիտասյան երաժշտությունը դաստիարակության հզոր ազդակ

«Հայ գեղջուկ երգերը հողում թաքնված ադամանդների են նման, դրանք պետք է խորքերից հանել, մաքրել, հղկել, փայլեցնել . . . »

ԿՈՄԻՏԱՍ

Հենց դա էլ եղավ հայ մեծ երգահան, երաժշտագետ, բանահավաք, երգիչ, խմբավար, մանկավարժ Կոմիտասի առաքելությունը: Նա իր ողջ կյանքը նվիրեց հայ ժողովրդական երգի փրկության, հղկման ու աշխարհին հասանելի դարձնելու հայրենասեր գործին:

Կոմիտասի կյանքն ու գործունեությունը երեխաների դաստիարակության հզոր միջոց են: Ուսումնասիրելով նրա ծանր կյանքի պատմությունը և միևնույն ժամանակ բացահայտելով Կոմիտասի բարի, մաքրամաքուր էությունը՝ ակնածում ես նրա այդքա՛ն անչար, չլցվել դաժանությամբ, այլ գործել՝ փրկել, մշակել, ստեղծել ու փոխանցել, և այդ ամենն անել անսահման սիրով, անմնացորդ նվիրումով, մեծ նախաձեռնությամբ . . .

Մի՞թե կա այս օրինակից ավելի վառ ուազդեցիկ գործոն՝ հայրենիքի զորացմանը, սեփական ժողովրդի ազատ ու արժանավայել կյանքի կերտմանը, ավելի լավ ու խաղաղ աշխարհ կառուցելու գործին նվիրված մարդ ձևավորելու համար:

Հայ հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասի գործունեության կարևորագույն ոլորտներից էր մանկավարժությունը: «Նա հանգիստ էր, ընկերական, մեղմ, ոգեւորությամբ տոգորված:

Նրա ժպտուն աչքերում թաքնված թախծալի ցոլքը, պարզ ինտոնացիան, խանդաղատալի ձայնը մատնում էին նրա ներքին կրակը: Կոմիտասը հիվանդ էր ժողովրդական երգով: Դասավանդելիս երգում էր և նրա ժողովրդական երգի մեջ զգացվում էին նրբերանգներ, ռիթմ, կոլորիտ», - այսպես էր հիշում Կոմիտաս-մանկավարժին հայ գրող Դերենիկ Դեմիրճյանը:

Հայտնի երաժշտագետ Վասիլի Կորգանովի վկայությամբ, Կոմիտասի շնորհիվ «Ճեմարանում երաժշտա-տեսական առարկաների դասարանն ավելի բազմամարդ էր, քան շատ կոնսերվատորիաներում և երաժշտական ուսումնարաններում»: Աշակերտներին օգնելու նպատակով կոմպոզիտորը գրել է մի շարք դասագրքեր՝ «Երաժշտության տարրական տեսություն», «Հայկական նոտագրություն», «Հարմոնիա»: Տասնյակ տարիներ Կոմիտասը երազում էր ազգային երաժշտանոցի ստեղծման մասին, որը, ցավոք, նրան այդպես էլ չհաջողվեց:

Չնայած մեզ հասած նրա ձայնագրությունների թիվը մեծ չէ, սակայն դրանք էլ բավարար են կոմիտասյան դպրոցի մասին լիարժեք գաղափար կազմելու համար: Շահմուրադյանի թավշյա տենորով անզուգական են հնչում հայ երգարվեստի մարգարիտները՝ «Կռունկ»-ը, «Հով արեք»-ը, «Անտունի»-ն, «Գարուն ա»-ն...

Իր կենսագրությունում Կոմիտասը գրում է. «Ծնվել եմ 1969թ. սեպտեմբերի 26-ին Փոքր Ասիայի Կուտինա կամ Քյոթահիա քաղաքում: Երրորդ օրն ինձ մկրտել են և անունս դրել Սողոմոն:

Թե մորս, թե հորս ազգատոհմերը ի բնե ձայնեղ են եղել:

Ծողներիս մահից հետո ինձ՝ միամորիկ զավակիս, դաստիարակել և հոգ է տարել հորենական տատս՝ Մարիամը»:

Կոմիտասը երաժշտություն գրի առնելու նկատմամբ լուրջ հետաքրքրություն ցուցաբերեց դեռ Գևորգյան ճեմարանում ուսանելու տարիներին և այդ աշխատանքը շարունակեց ամբողջ կյանքի ընթացքում:

Եվ որտեղ երգն էր՝
Այնտեղ էլ նա էր. . .
Ուրախ է կյանքը,
Տխու՞ր, դաժա՞ն է,
Միշտ ժողովրդից երգն անբաժան է,
Նա միշտ երգով է բանում ու դատում,

Սիրում ու ատում,

Վիշտը փարատում. . .

Պ. Սևակ

Այսպես անխոնջ, առնվազն 25 տարի անընդհատ Կոմիտասը գրի էր առնում ժողովրդական երաժշտական ստեղծագործություններ՝ երգեր, պարեր, մեղեդիներ՝ շուրջ 5000-ը, որոնցից մեզ է հասել մոտավորապես 1000-ը։

Գեղջկական երգը հայելու նման արտացոլում է հայ ժողովրդի կյանքն ու ներաշխարհը՝ հստակ ու ճշմարտացի։ Կոմիտասը ժողովրդական երգերը մաքրեց, զտեց աղավաղումներից, օտար տարրերից, սխալներից։

Նա լսեց գեղջուկի երգն ու մրմունջը, արվեստի շնչով կենդանացրեց և վերդարձրեց ժողոորդին։

Կոմիտասի տասը պատվիրանները երգչին

- Երգելուց առաջ ամբողջ մարմինը կարծես մեռած (մարզանքը կմեռցնե մարմինը,բայց միտքը կմնա ուշիմ ու եռանդուն)
- Ձայնը հազիվ լսելի շշուկով սկսել և երգել պիանո պիանիսիմո,դեռ կիսաաստիճաններով բարձրանալ և կամաց՝ կամաց լայնացնել ձայնաշարը։
- Երգելիս չջղայնանալ և խուսափել հուզմունքից։
- Ամեն ջանք թափել ձայնը ներսը պահելու,այլ որքան հնարավոր է դուրս արտաբերելու։
- Ձայնը առաջ մղել ինչպես մի նետ և այնքան հեռու,որքան շունչը թույլ է տալիս։
- Հազիվ լսելի շշուկով զարգացնել կիսաաստիճանները և կամացկամաց ընդլայնացնել երաժշտական աստիճանները,և միայն այն պարագայում,երբ նախընթաց աստիճանը կատարյալ է ելնում,քիչքիչ ձայնի ուժը ավելացնել,պահպանելով ամենայն հանգստություն առանց որևէ հուզմունքի։
- Շատ աշխատանք կատարել շատ քիչ շունչ գործադրելով։

- Ձայնը մարզելիս այնպիսի բառեր պտրել, որոնք մեծ գաղափարներ են պարունակում կամ պատկերազարդ են, կամ զորավոր՝իբրև զգացմունքի արտահայտություն,զորօրինակ՝ գարուն,աշուն,ձմեռ,երկինք,արև,լուսին,ամպ։Երգել դոցա աստիճանաբար ձայնաշարով։Այդ կզարգացնի տարածության գաղափարը ու կլայնացնի ու կհեռավորի ձայնը։
- Այս բոլոր աշխատանքից հետո փորձել աստիճանաբար ուժեղացնել և աստիճանաբար պակասեցնել ձայնը և գնահատումներով երգել։
- Մի ձայնանիշ առնել իբրև հիմնավոր և շուտ անցնել մի ուրիշ ելևէջի՝ ավելի բարձր կամ ավելի ցածր,և շունչի մեջը լցնելով,ուժեղացնել մեկ նոտայեն մինչև մյուսը։

Կոմիտասի մտքերից



Ժողովո՛ւրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացե՛ք և սովորեցեք նրանից։

ԿՈՄԻՏԱՍ

Եթէ մանուկը չի հասկնար ձեր դասաւանդութիւնը, յանցանքը ձերն է, որովհետեւ չէք կրցած հասկանալ անոր հոգին. պէտք է վար իջնել մինչեւ անոր հոգեկան աստիճանը, եւ զայն առնելով ձեզի հետ բարձրացնել:

ԿՈՄԻՏԱՍ

Ընտանիքը որքան զարգացած ըլլայ, մանուկն ալ այնքան միտքի առավելութիւններով երեւան կու գայ:

ԿՈՄԻՏԱՍ

Ժողովրդի երգեցողությունն ունի ինքնուրույն դպրոց, ուր դաս են առնում ամենքը, ամեն ժամանակ, երբ կարիք են զգում:

ԿՈՄԻՏԱՍ

Ինձ համար չկա ուրիշ երկինք, քան իմ ժողովրդի հարազատ հոգին:

ԿՈՄԻՏԱՍ

Հայ ժողովրդի զավակնե՛ր, դուք կարդացեք Մովսես Խորենացի, Եղիշե, Նարեկացի, Խաչատուր Աբովյան, Ռաֆֆի, Ալիշան, Պեշիկթաշլյան և տեսեք, թե ով ենք մենք:

ԿՈՄԻՏԱՍ

Հայ երաժշտությունն իր մեջ կսնուցանե ոգին իր իսկ ցեղին, որովհետև երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին:

ԿՈՄԻՏԱՍ

Հայն ունի ինքնուրույն երաժշտություն… Յուրաքանչյուր ազգի երաժշտությունն իր ազգի հնչական ելևէջներեն կծնի ու կծավալվի: Հայ լեզուն ունի իր հատուկ հնարավորությունը, ուրեմն և համապատասխանող երաժշտությունը:

ԿՈՄԻՏԱՍ

Մահվան արժանի է այն ժողովուրդը, որ զուրկ է գեղարվեստե, որովհետև ժողովուրդ մը՝ որ գեղարվեստ չունի, կնշանակե թե զգալու կարողություն չունի: Եվ ի՞նչ է ժողովուրդ մը՝ որ չի զգար:

ԿՈՄԻՏԱՍ

Մենք ի՞նչ գիտենք՝ ինչ է ուզում հայի հոգին։ Մենք վիճաբանում ենք, թե ինչու է օտարն ասում, թե հայը չունի ինքնուրույն երաժշտություն, երբ մեր մտավորականությունն ամեն տեղ հայ երգի անվան տակ հայերեն բառերով ռուսական ռոմանսներ, իտալական մեղեդիներ կամ տաճկական բայաթիներ է երգում։ Էլ ինչու՞ պետք է օտարը գիտենա, թե որն է քո երգը, երբ Պոլսում հայ տիրացուները հարուստ ամիրաներին դուր գալու համար կլկլացնելով պատարագ են երգում՝ նմանեցնելով տաճկական եղանակներին։

ԿՈՄԻՏԱՍ

Մեր ժողովուրդը քարոզ չի հասկանում. մեկ հասկացված ձայնը 1000 ճառ արժի։

ԿՈՄԻՏԱՍ

Ուսուցի՛չ պարոններ ու քոյրե՛ր, զգուշութեամբ ու երկիւղածութեամբ մօտեցէ՛ք դաստիարակութեան գործին. խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը. դաստիարակելու կոչված էք սերունդ մը, որ ապագայ ազգն է. սխալ ուղղութեամբ ազգը մը կը խորտակէք վերջը։

ԿՈՄԻՏԱՍ

Սիրեցե՛ք զիրար, շա՛տ սիրեցեք, որպեսզի ապրեք։

ԿՈՄԻՏԱՍ

Սխալ դաստիարակութեան արդիւնքն է, որ շատեր որոնք հանճարներ պիտի ըլլային, եղած են գողեր…

ԿՈՄԻՏԱՍ

Դասի պլան

Թեմա՝ Երաժշտությունը և գրականությունը

Ուսուցանել «Կաքավի երգը», երաժշտությունը՝ Կոմիտասի, խոսք՝ Հ. Թումանյանի։

Ունկնդրել «Կաքավի երգը» լարային քառյակի կատարմամբ։

Դասի նպատակները

Սովորեցնել երգը և ծանոթացնել լարային քառյակի հետ։

Զարգացնել երգը մաքուր և արտահայտիչ կատարելու, երաժշտությունը վերլուծելու, ստեղծագործելու կարողությունները և երաժշտությունը հապապատասխան շարժումներ կատարելու հմտությունը:

Դաստիարակել սեր դեպի Կոմիտասի երաժշտությունը:

Դասի ավարտին սովորողները պետք է կարողանան՝

Երգել մաքուր և արտահայտիչ, որոշել հնչող երաժշտության բնույթն ու տրամադրությունը, կատարել բնույթին համապատասխան շարժումներ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Մտագրոհի միջոցով ճշտել «արվեստ» բնագավառի մասին սովորողների գիտելիքները, նշել նրա ճյուղերը:



Պատմել երաժշտության և գրականության փոխկապակցվածության մասին:

Հնարավորություն տալ աշակերտներին ազատ արտահայտելու իրենց կարծիքները, ներկայացնելու հատկապես երաժշտության և գրականության նմանությունները ու առանձնահատկությունները։

Ամփոփում ենք երեխաների պատասխանները և ամբողջացնում թեման։

Իմաստի ընկալման փուլ

Սովորեցնել «Կաքավի երգը», կատարել արտահայտիչ՝ հետևելով երգի նրբերանգներին։

Ունկնդրել «Կաքավի երգը» լարային քառյակի կատարմամբ, համեմատել սովորած երգի հետ, մեկնաբանել կարծիքները։

Առաջարկել երեխաներին հորինել շարժումներ, որոնք կհամապատասխանեն երաժշտության բնույթին և տրամադրությանը, կարող են նաև նկարել երաժշտությունից ստացած իրենց տպավորությունները։

Կշռադատման փուլ

Ամփոփել դասը և գալ ընդհանուր եզրահանգման, որ երաժշտությունն ու գրականությունը սերտորեն կապված են լրացնում և ամբողջացնում են միմյանց։

«Վենի դիագրամ» մեթոդով ամբողջացնում ենք աշակերտների պատկերացումները երաժշտության և գրականության առանձնահատկությունների և ընդհանրությունների մասին։

Դասի վերջում 5 – 7 րոպե աշխատում են աշխատանքային տետրերում, որը օգնում է ուսուցչին ճշտել նոր նյութի յուրացման մակարդակը։

Դասն ավարտվում է «Կաքավի երգի» կրկնությամբ։



Աշակերտների աշխատանքներից

Կոմիտասն եմ հանճարեղ

Որքան ասես երգ ունեմ

Մանկուց

Ի վեր

Տարիներ

Ազգի երգն եմ

Սփռել աշխարհով մեկ։

* * *

Կոմիտասն ես մեծն երգահան

Որ ապրում ես անհաս փառքով

Միշտ կմնաս մեր սրտերում

Ինչպես մեծն հպարտություն

Տվել ես մեզ մեծ հարստություն

Անունն է քո

Սողոմոն Գևորգի Սողոմոնյան։

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը, գալիս ենք այն եզրակացության, որ մեծ է երաժշտության դաստիարակչական ու ճանաչողական նշանակությունը սովորողների աշխարհայացքային և կողմնորոշումների ձևավորման գործում։

Հաշվի առնենք նաև , որ ներկայումս մեծացել է տարբեր ազգերի մշակութային կապերի դաշտը, մարդկային փոխհարաբերությունների շրջանակը, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման ու դաստիարակության գործընթացում, պարզ է դառնում, որ երաժշտությունը մեծ հնարավորություններ ունի Մարդ–անհատի դաստիարակության և զարգացման գործում։

Այսպիսով, ուսուցման և դաստիարակության բովանդակության մեջ առաջին հերթին արտացոլում են գտնում երաժշտության մասին ընդհարացված հանգուցային գիտելիքները, որոնք նպաստում են երաժշտական արվեստի ամբողջական պատկերացման ձևավորմանը, ապա գիտակցմանը։

Երաժշտական դաստիարակության գործունեության բոլոր ձևերի /երգեցողություն, ունկնդրում, երաժշտառիթմական շարժում, նվագ մանկական նվագարաններով, իմպրովիզացիա/ հիմքում ընկած է երաժշտության հուզական ակտիվ ընկալումը:

Պետք է իրապես արժևորել մեծ կոմպոզիտորի մանկավարժական հարցադրումները, որոնք այսօր էլ հստակ պատասխան են փնտրում և որոնց լուծման ճանապարհին Կոմիտասի դիտարկումները կարող են լինել ուղենիշ, դառնալ կրթության ու դպրոցի զարգացման արդյունավետ ուղիների մաշակման բանալին:

Օգագործված գրականության ցանկ

1. Երաժշտություն առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագրերր Երևան, 2007թ.

2. Երաժշտությունը առաջինից չորրորդ դասարաններում: Մեթոդական ձեռնարկ Յուզբաշյան, Փահլևանայն Երևան, 2001թ.

3. Երաժշտություն, ուսուցչի ձեռնարկ Կ. Ղազարյան, Գ. Թադևոսյան Երևան, 2001թ.

4. Ժամանակակիցների Կոմիտասի մասին Գ. Գասպարյան Երևան, 1960թ.

5. Մանկական հանրագիտարան Կոմիտաս
6.